

ալ տարօրէն փորձ ու ճարտար, օգտագործելու օրուան կամ դրացի գիւղերուն մէջ շաբթուան պատահարը: Անպարար, որուն հնարքները ժամու պատկերին սատանաներն իսկ կը զարնեն այնքան անկարելի, հրաշք կը թուին, երբ բերնէն կը հանէ ողջ ճուտիկը, կը դնէ քիւլախին տակ, որպէսզի հակիթ դառնայ ու շունչանորդի ճուտիկը կը դառնայ խելօքիկ ու սպիտակ այդ հակիթը: Թող տէրտէրը, վարժապետը ճաթին, խելք հասցնելու համար սա հրաշքներուն: Աբլոր, անշուշտ: Բայց երբ այդ գեղացիներուն համար տաղաւարի վայել հանդիսաւորութիւն ունէր ճակատումը երկու... վարժապետներու: Անմոռանալի է տեսարանը, զոր ապրեր եմ այդ գեղին մէջ. ինձմէ առաջ սանկ քառասուն մը տարի վարժապետ այդ մարդուն, անունը Սիմոն, որուն ծերութիւնը առաջացած խորացած էր. սորվեցնելը, երգելը անհնար դարձնելու աստիճան: Հիմա չու կը գործէր (այծի մազէ կապերտ): Ու նստելէն, նստելէն մէջքը երկուք՝ չէր կրնար հրաժարիլ աբլորութեան պարտադրանքէն նոր ժմնուկ, պէս ու մօրութեւն հոգի փալապ (սագին ձագուկը) պատանիին հետ, հրապարակաւ, հանդիսաւոր մրցումը ընելու, եւ եկած՝ երկու ձեռքերուն մէկ-մէկ ցուպ, սրճարան: Մրցումի նիւթը անշուշտ Սիմոն վարժապետինն էր, որ այդ մարդոց բոլորէն կը սիրուէր, իրենց կեանքի հեռագոյն շրջանը իրենց իբրեւ դարձնող, յետոյ իր սրամտութիւններովը բոլորն ալ խենթացնող մը: «Յայսմաւուրբ»էն՝ նիւթը: Գտնել անունը սուրբին, որ քաղաքի մը մէջ կուռքերը կոխոտելու սրբապղծութիւնն էր գործած արարողութեան պահուն, անոնց անբարբառ բերանին ու քիթին «մեծաձայն փուխ արձակելով»: Անուշտ կարդացած ու մոռցած էր տարօրինակ սուրբին սա սրբազան հերոսութիւնը, որուն համար ի՛նչ հեշտագին յօժարած էր նահատակուիլ: Բայց անո՞ւնը: Ինչպէ՞ս գտնել ատիկա: «Պապանձումն Զաքարիայի» վճռեց մեծ լրջութեամբ վարժապետ Սիմոն, սայլագործ, որ ակնոց ունէր ու «բորոտ» Աստուածաշունչ մը: Վճիռը ընդունուեցաւ յաղթաձայն